Դինդ կայեք, տղե՛րք, ձեր յավը տանեմ

ՀՀ պաշտպանության նախարարության մշակույթի բաժնի և Նուբարաշենի մոտոհրաձգային գնդի հրամանատարության նախաձեռնությամբ Երևանի Սպայի տան «Էլեգիա» վոկալ–էստրադային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ երգահան Ռոբերտ Պետրոսյան) համերգներով հանդես եկավ Երասխ–Վայք ընկած սահմանային ուղեկալներում: Դրանք սովորական համերգներ չէին, այլ պետական մեր սահմանը պաշտպանող զինվորների մարտունակությունը բարձրացնելուն նպատակամղված միջոցառումներ: Ընդամենը 5–6 օրվա ընթացքում, անցնելով հարյուրավոր կիլոմետրեր, խմբի անդամները փվեցին 10 համերգ, որոնք հաճախ կայանում էին բաց երկնքի տակ՝ դրամատներից մի քանի հարյուր մետրի վրա, կամ ուղղակի զորանոցում: Համերգային յուրօրինակ այս շրջագայությանն ուղեկցում էր նաև մեր հատուկ թղթակիցը:

Լուսանկարը՝ ՀՈՎՀ. ԱՐՄԵՆՅԱՆԻ

Երասխավանի դիրքերում

ԺԱՄԱՊԱՀՆԵՐ

Սահման... Պետական սահման. այս բառակապակցությունը մեզնից շատերի ընկալմամբ զուգորդվում–նույնանում է անվերջ չգվող հեշալարերի. սահմանի «այս» ու «այն» կողմը «պարզորոշող» աշտարակների շարանի պես: Դա սովորական զգայում չէ. այն իր մեջ ներառնակում է և՛ վախի, և՛ անհանգստության, ինչու չէ, նաև ապահովության զգայում:

– Այ, տեսե՛ք, երևայող սարերի ամբողջ երկայնքով մեր դիրքերն են, – պարզաբանում է Նուբարաշենի մոտոհրաձգային գնդի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գագիկ Ղազարոսյանը: – Դիմացի սարերն արդեն թանկ են: Աչալուրջ մեր տղաները գիշեր ու օր դիրքերից հետևում են թշնամու յուրաքանչյուր քայլին: Այժմ դժվար թե ասդրիչ զորությամբ հավասարակշռությունից հանեն արարյուն մեր տղաներին: Չէ, նրանք այլևս ոչ աջվանը չեն, մշտական մարզումների ու հրամանատարության անկկայրած պարապունքների շնորհիվ հրաշալի են տարբերակում «ասսը չորից», հստակ գիտեն՝ երբ պատասանել կրակին կրակով...

Անարդարացի կլիներ թեկուզ մեկ–երկու տողով չխոսել Գ. Թադևոսյանի մասին: Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրվանից նա հայտնվել է երկրապահների կամավորական խմբերում, պայքարի փառավոր ճանապարհ անցել: Տեղանքի «կենդանի բարտեզ» – ինչպես կատակով բնորոշում են մարտական ընկերները: Հրամանատարի ու սահմանում ծառայող զինվորի միջև ես հայր–որդիական վերաբերմունք տեսա: Մի կտոր հացը խնամում է հավասար, նույնն են հագուստն ու անկողինը, նաև՝ զենքը, որն անբաժան է բանչիչ անգամ հանգստի կարճատև պահերին:

ԵՐԱՍԽԱՎԱՆԸ՝ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ

Այսօր, կամա թե ակամա, այս անվանումը ենք զուգորդում ենք Սարդարապատ, Աշ–Ապտրան անունների հետ: Երասխավանի հերոսամարտն ապացուցեց, որ մեր պետական սահմանի հենց այս հատվածն է, որ առանձնակի պետք է պահել. չէ որ մայրաքաղաքը մի բանի տասնյակ կիլոմետրի վրա է:

Ալարատի շրջանի պարետության հիմքերի դրա 1993 թվականի մարտի 26–ին ստեղծվեց Երասխավանի սահմանապահ գումարտակը:

– Մեր տղաները փայլուն են կատարում առաջադրանքները, չեն զրկվում դժվարություններից, – հպարտությամբ նշում է գումարտակի հրամանատար, մայոր Նիկոլայ Բալասանյանը:

... Սենեկոծ ասած, ինչ սկզբում այս խոսքերը շինծու և կեղծ թվացին. բարակույտերի այս ամայի աշխարհում ինչպե՞ս կարող է ամեն ինչ հարթ լինել: Սակայն սխալվեցի: Սխալվեցի, որովհետև թե՛ զորանոցում, թե՛ դիրքերում ստեղծված են գոնե բավարար հարմարություններ՝ սահմանապահ զինվորին տրաք անդով, անկողնով, հագուստով ապահովելու առումով:

– Սենդով ապահովումը վատ չի կազմակերպված. եթե ո՛չ անպակաս, ապա հաճախակի են միսը, պանիրն ու կարագը, տրաք թեյը: Սեկ զինվորի հացի օրաբաժինը կազմում է 750 գ, – մեր զրույցը շարունակում է շտաբի պետ, լեյտենանտ Կոմիտաս Մուրադյանը: – Լուծված է նաև հագուստի հարցը: Մի փոքր նեղվում ենք երկարաճիտ կոշիկների պակասից և կուզեինք, որ մեր նախարարությունը դրան իրազեկ լիներ, առավել ևս, որ շուտով մենք կընդունենք նորակոչիկներին:

– Գաղտնիք չէ, որ հանրապետության մի շարք զորամասերից զինվորները փախուստի են դիմում: Այս առումով ինչպիսի՞ն է իրավիճակը ձեզ մոտ:

– Որքան ինչ հայտնի է, զորամասը լքողների թիվն առավել մեծ է պետական սահմանից հեռու, մասնավորապես զինծառայողների շրջանում: Սակայն Երասխավան–Վայք տարածքաշրջանից «փախածների» թիվը չի անցնում մի բանի տասնյակից: Սահմանում ծառայող զինվորը պետք է գիտակցի, որ իր ձեռքում է հայրենիքի ճակատագիրը:

– Եղե՞լ են դեպքեր, երբ ձեզ մոտ ծառայության են ուղարկվել ֆիզիկապես վատառողջ նորակոչիկներ:

– Սա, երևի թե մեր նորաստեղծ բանակի ամենացավոտ հարցերից մեկն է: Այսօր մենք իրավունք չունենք ինչ–ինչ ճանապարհներով ծառայությունից խուսափող մեկի փոխարեն բանակ կանչել նրան, ով պարզապես պիտանի չէ ծառայության համար:

... Թե՛ զորամասում, թե՛ դիրքերում ես հանդիպեցի 18–19 տարեկան պատանիների՝ Աբարատ Պետրիկյանին (Մասիսի շրջան, գյուղ Հովտաշեն), Մուրադ Գևորգյանին (Մարտունու շրջան), Արտուշ Ղազարյանին (Վայքի շրջան, գյուղ Զառիթափ), որոնք արդեն մեկ տարի է, ինչ անընդհատ ծառայում են մեր սահմանի ամենաթեժ կետերից մեկում, հպարտ են դրա համար, ու պարզապես հայրենիքի դավաճան են համարում բոլոր նրանց, ովքեր խուսափում են ծառայությունից:

Բայերից՝ Տիգրանաշենը, հազիվ 50–60 տնտեսություն ունեցող գյուղ է, ուր այսօր բնակվում են առավելապես Բաքվից բռնագաղթվածներ և մեկ–երկու ազատամարտիկների ընտանիքներ: Դրանցից մեկն էլ Թաթուլն է, ամբողջ շրջանում փառաբանված Թաթուլ Հարությունյանը, որին թշնամու գնդակը մի բանի անգամ խոցեց, սակայն չկարողացավ ընկճել: Իր ջոկատով նա կանգնած էր հայոց բանակի մարտիկների կողքին: Ավելի ճիշտ՝ գնում էր առջևից, առաջին կրակը վերցնում իր վրա: Այսօր նրա ջոկատի տղաներն ընդգրկվել են տարածքաշրջանի ուղեկալային վաշտերում և իրենց ռազմական փորձն են փոխանցում նորակոչիկներին, ովքեր աղջամուղջին արթնացել ու արդեն սկսել են մարզումները:

Թաթուլը, ձեռքի ափը սահեցնելով փառավոր մորուքի վրայով, մոտ է կանչում զարմանալի ողորկ մանով, հապտ թաթերով ու փայլուն աչքերով Մահմուդին: Սա սովորական շուն չէ, այլ շնագայլ, որ մեկ տարուց ավելի զինվորների կողքին է: Գլուխն սպիներով է պատված, երևի ոտքի փափկամիսն ասես թրատված լինի:

–Մահմուդը մեր հույսն է: Գիտե՞ս, բանի անգամ է անցել ականապատված տարածքներով, պայթեցրել դրանք, հրաշքով կենդանի մնացել և մեզ համար ճանապարհ բացել:

Մինչև գոտկատեղը մերկ՝ տղաները շարունակում են իրենց մարզումները: Ինչ զարմանում է նրանցից մեկը, որը, չնայած ցածր հասակին, այնպիսի ճարպկությամբ է գետնին տապալում վրա հասած «հակառակորդին», ասես իսկական մարտի է բռնվել:

– Սեր «Տարզանչիկն» է, թուրքերի ահուսարսափը, կարատեի, ուշուի, սամբոյի վարպետ է, հրաշալի կռվող տղա: Ջոկատի զինվորների մեջ նման շատ տղաներ կան, առանց որոնց դժվար է գլուխ բերել այս կամ այն մարտական առաջադրանքը:

Կես ժամ անց տղաները հասցրել էին նախաճաշել, ստացել էին զենքը և շարվել տողանի: Եվս մի բանի րոպե, և նրանք կշարժվեն դեպի դիրքերը՝ փոխարինելու իրենց ընկերներին, որոնք գասը օր շարունակ սահմանային անցուդարձին են հետևել, պահպանել ընկերների և մեր բոլորի անդորրը:

ՍԱՌԸ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ, ՏԱՔ ՍԻՐՏ ԵՒ ՄԱՔՈՒՐ ՁԵՌՔԵՐ

...Խաչիկ գյուղի տարածքում տեղակայված զորամաս տանող մեր ավտոբուսը, շունչը փչելով, հազիվ է ելնում բարձունքն ի վեր չգվող ոլորաններով: Լերկ, բայբայված լեռ ու սարերի մեջ հատ ու կենտ մասրենու թփեր են, որոնք թեզ են ժպտում իրենց հասուն պտուղներով: Ու շուտով, որպես օազիս անապատում, դիմացդ փռվում է Խաչիկը՝ բոցուկրակի մեջ: Բնությունը չի զլացել և իր գույներն է շռայլել այս գյուղին:

Վայք–Եղեգնաձոր օպերատիվ ուղղության պետ, մայոր Սլավիկ Պողոսյանի հետ մեր զրույցը ընթանում է հայ զինվորի պատրաստականության, նորակոչիկների ընդունման ու տեղավորման, ինչպես նաև այլ հիմնահարցերի շուրջ:

- Ներկա դրությամբ մենք դեռ լուծելի շատ խնդիրներ ունենք: Առայսօր Հայաստանում չկան մասնագետ զինվորականներ պատրաստող կրթօջախներ:

ԲՈՒՀ–ից եկած պահեստային սպաներն իրենց հետ չսիազանց քիչ բան են բերել, հետևաբար, նրանք ինչպե՞ս կարող են աշխատել նորաթուխ զինվորի հետ:

Ըստ իս, իսկական սպան պետք է ունենա սառը դատողություն, տաք սիրտ և մաքուր ձեռքեր, և զինվորին պետք է դաստիարակի ռազմական բրեպտոմատիայի ոգով: Մի բան, որն առայժմ բացակայում է մեզանում: Հարկավոր է, թեկուզ խորհրդային բանակի կանոնադրությունը հիմք ընդունելով, կազմել և շուտափույթ հրապարակ հանել մեր բանակի կանոնադրությունը:

ՍԱՀՄԱՆԸ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Վայքի մոտոհրաձգային գումարտակն իր սահմանապահ ուղեկալներով սովորական լարված ռեժիմ է ապրում: Գումարտակի հրամանատար Սամվել Շահբազյանն ու նրա տեղակալ զնաբերդցի Վաչիկ Կարապետյանը մտահոգված են նորակոչիկներին ընդունելու հոգսերով. անհրաժեշտ է արագ ավարտել զորանոցների վերանորոգումը, պահեստավորել ձմեռվա համար կուտակած փայտը, մազութը, սննդամթերքը:

Սակայն հրամանատարին ամենից առաջ մտահոգում է ինչ–ինչ ճանապարհներով կոչումներ ստացած անարժան սպաներից ազատվելու խնդիրը: Երիտասարդ հրամանատարը մեծ ուշադրություն է դարձնում տեսական պատրաստականության վրա:

–Մենք նորակոչիկներին բերելու ենք անմիջապես կենտրոնական հավաքակետից, – նշում է Ս. Շահբազյանը, – այս դեպքում արդեն գործ ունենք ծառայության կանչված զինվորի հետ, որին մենք ենք **զինվոր** դարձնելու՝ սկսած հագուստից մինչև զենքին ու զինամթերքին տիրապետելու արվեստը:

Ստեղծել ենք ուսումնական կենտրոն, ուր կզբաղվենք նրանց ռազմահայրենասիրական դաստիարակությամբ: Միայն թե զորահավաքը տեղերում պետք է կազմակերպվի լրջորեն, առանց կեղտոտ գործարքների: Հայոց բանակում պետք է ծառայեն ֆիզիկապես առողջ, պնդակազմ երիտասարդներ:

...Խնձորուտ և Բարձրունի գյուղերի ուղեկալային սահմանապահ դիրքերը մեր ավտոբուսը զորու չէր հասնելու: Օգնության եկավ գումարտակի «Ուազը»:

Թե՛ Խնձորուտի, թե՛ Բարձրունու բնակիչները, անգամ երեխաները, այնպես են մերվել զինվորներին, ասես իրենք էլ են ծառայության մեջ:

Երևի թե ժամանակներն են այդպես պահանջում: «Դեղի» 60–ն անց, թոռների ու հարսների տեր Սիրեկան Հովհաննիսյանի դիմումը հարկել են, ու նա որպես զինվոր մնացել է բանակում, շարունակում է պաշտպանել սահմանը:

Չեմ կարող չհիշատակել Խնձորուտի սահմանապահ վաշտի հրամանատար, կապիտան Սամվել Ավագյանի, նրա տեղակալ, Աֆղանստանում ծառայած Լիպարիտ Առուտամյանի, ծառայության գերազանցիկներ Լեոնիկ Մանուկյանի, Սայիս Վարդանյանի, 20–ամյակը բոլորած դարբասեցի Վոլոդյայի, մյուս գյուղերի անունները, ովքեր ծառայում են հայրենիքին՝ այս բառի ամենալայն և ամենաիսկական իմաստով:

* * *

Վաղ առավոտյան, փունջարշի ճանապարհին, սահմանի այն կողմից ավտոմատային կրակահերթ տրվեց: Սահմանի մեր տղաների համար դա սովորական «բարի լույս» էր, որին նրանք չկամեցան պատասխանել: Պետք լինի՝ կպատասխանեն: Կպատասխանեն հայրենիքի զինվորի և ոխտյալ ազատարարի արժանապատվությամբ...

ՍԱՆԴՐՈ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ
Երասխ–Եղեգնաձոր–Վայք